ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ և ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՆ ՔԿՎ- ԳՀԾՁԲ -18/5-1

ք. Երևան «27» 02 2018 թ.

<<**ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը**>>-ը ի դեմս **վարչության պետ** Ռ. Հովհաննիսյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և <<Մատակարար.ԱՄՎ>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Վ. Թումասյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում հայտնաբերվեն թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1.800.000 (մեկ միլիոն ութհարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն հայտգալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[1]:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[2]:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

7.13 Սույն պայմանագիրը կազմված է __12__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն ք. Երևան, Արշակունյաց-63 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011175016 ՀՎՀՀ 02204739 Վարչության պետ՝ Ռ.Հովհաննիսյան	<<Մատակարար.ԱՄՎ>> ՍՊԸ ք.Երևան, Լ.Լիսինյան 8 «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/Հ 2470101224450010 ՀՎՀՀ 00454158 տնօրեն՝ Վ.Թումասյան
_____ /ստորագրություն/	_____ (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
«27» փետրվարի 2018 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿՎ- ԳՀԾՁԲ -18/5-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ -ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների ալանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը			չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
								հասցեն	ժամկետը**
		Հ/Հ	Գնման ենթակա ծառայության անվանումը	Ծառայության միավորի գինը՝ ՀՀ դրամ					
			1. Համակարգիչների սպասարկում						
1	50311120-1	1.	Պրոֆիլակտիկա	10000	ՀՀ դրամ	1.800.000	1	ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչություն ,Արշակունյաց 63	2018թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ
		2.	CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ /775 սոկետ/Ինթել ՍՊՈՒ-ի հովացուցիչ օրիգինալ (Cooler for CPU 775 socket Intel original), կամ համարժեքը	20					
		3.	CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ /1155 սոկետ/ Ինթել ՍՊՈՒ-ի հովացուցիչ օրիգինալ (Cooler for CPU 1155socket Intel original), կամ համարժեքը	10					
		4.	MB նորոգում	10					
		5.	MB փոխարինում ներառյալ 775 սոկետ ՎԳԱ օն բորդ, (775 socket, VGA on board), կամ համարժեքը	10					
		6.	MB փոխարինում ներառյալ 1155 սոկետ ՎԳԱ օն բորդ, (1155 socket, VGA on board), կամ համարժեքը	10					
		7.	CPU փոխարինում ներառյալ Քորե 'այ '3 3220 (Intel Core i3-3220), կամ համարժեքը	10					
		8.	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2048Մ 667/800ՄՀՑ (DDR2 2048M 667/800MHZ), կամ համարժեքը	10					
		9.	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ3 2048Մ 1066/1333/1600 ՄՀՑ (DDR3 2048M 1066/1333/1600MHZ), կամ համարժեքը	10					
		10.	VGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 220 1Գբ ՊիՍիԱյ -Էքսպ(Nvidia GF GT 220 1Gb PCI Exp) կամ համարժեքը	10					
		11.	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 500Գբ ՍԱՏԱ, 7200ռպմ (HDD 500 Gb SATA, 7200 rpm), կամ համարժեքը	10					

		12.	DVD-RW փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW), կամ համարժեքը	10							
		13.	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450Վտ (Power suply unit for P4 Case 450w), կամ համարժեքը	10							
		14.	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100/1000 Դ-լինկ (D-link 10/100/1000), կամ համարժեքը	10							
			2. Մոնիտորների սպասարկում								
		15.	Ղեկավարող սալիկի վերանորոգում	10							
		16.	Վերածրագրավորում	10							
		17.	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 19"	10							
		18.	Վերանորոգում (վնասված մասերի փոխարինում)	10							
			3. Անխափան սնուցման սարքերի սպասարկում								
		19.	Ղեկավարող սալիկի վերանորոգում	10							
		20.	Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/7Ա	10							
			4. Լազերային տպիչների սպասարկում								
		21.	Պրոֆիլակտիկա	10000							
		22.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊԼՋ 5L/6L(Քենոն ԵՊ Ա)/1100(Քենոն ԵՊ 22),1200(Քենոն ԵՊ 25)/1300/1150/1160/1320/2015,կամ համարժեքը (HP LJ 5L/6L(Canon EP A)/HP LJ 1100(Canon EP 22)/HP LJ 1200(CanonEP25) /1300/1150/1160/1320/2015), կամ համարժեքը	3000							
		23.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Քենոն ԵՊ 26/27/ֆիքս 9/10 (Canon EP 26/27,FX9/10), կամ համարժեքը	3000							
		24.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊԼՋ 1010,1012,1015, 1018, 1020, 1022 (HP LJ 1010,1012,1015, 1018, 1020, 1022 Q2612A (Canon 303/703)) կամ համարժեքը	7000							
		25.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Քանոն 725 կամ համարժեքը	7000							
		26.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Xerox Phaser 3010 կամ համարժեքը	7000							
		27.	Լիցքավորում լազերային տպիչների (սև) ներառյալ քարթրիջի չիպը, կամ համարժեքը	10							
		28.	Լիցքավորում լազերային տպիչների (գունավոր) ներառյալ քարթրիջի չիպը, կամ համարժեքը	10							
		29.	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Տեֆլոնե լիսեռ (HP/Canon կամ համարժեքը)	10							
		30.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ (HP/Canon կամ համարժեքը)	10							

			31.	Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկ Laser Jet 1100/5L /6L /4L/4P/1200/1150/1300/2100/4000 85A (Canon LBP 800/810/1120/2900/1210/725) կամ համարժեքը	3000						
			32.	Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկ Xerox Phaser 3010 կամ համարժեքը	10						
			33.	Կարատրոնի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Կարատրոնը Laser Jet 1100/5L /6L /4L/4P/1200/1150/1300/2100/4000 85A (Canon LBP 800/810/1120/2900/1210/725) կամ համարժեքը	3000						
			34.	Մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը Laser Jet 1100/5L /6L /4L/4P/1200/1150/1300/2100/4000 85A (Canon LBP 800/810/1120/2900/1210/725) կամ համարժեքը	3000						
			35.	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ (HP LJ, Canon LBP կամ համարժեքը)	3000						
				5. Պատճենահանող սարքերի սպասարկում							
			36.	Պրոֆիլակտիկասև	10						
			37.	Ղեկավարող սալիկի վերանորոգում	10						
			38.	Լիցքավորում պատճենահանող սարքերի ներառյալ տոները Քենոն ՖՍ (Canon FC), կամ համարժեքը	10						
			39.	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի տեֆլոնե լիսեռ Canon 1215/6216/6317/1520/7161/1600 կամ համարժեքը	10						
			40.	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում ներառյալ Վառարանի թերմոթաղանթ Canon 1018/2016/2018 կամ համարժեքը	10						
			41.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ Canon 1215/6216/6317/1520/7161/1600/2016/2018 կամ համարժեքը	10						
			42.	Վառարանի ֆետրե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ֆետրե լիսեռ Canon 1215/6216/6317/1520/7161/1600/2016/2018 կամ համարժեքը	10						
			43.	Թմբուկի փոխարինում ներառյալ Թմբուկ Canon FC կամ համարժեքը	10						
			44.	Թմբուկի փոխարինում ներառյալ Թմբուկ Canon 7161/1600/2016/2018 կամ համարժեքը	10						
			45.	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ Canon 1215/6216/6317/1520/7161/1600/2016/2018 կամ համարժեքը	10						
			46.	Սքաների Լամպի փոխարինում ներառյալ Լամպը A4 , կամ համարժեքը	10						
			47.	Սքաների Լամպի փոխարինում ներառյալ Լամպը A3 լումինիսցենտային, կամ համարժեքը	10						
			48.	Կարոտրոնի բլոկի փոխարինում	10						
				6. Թանաքաշ թային տպիչների սպասարկում							

		49.	Լիցքավորում թանաքաշթային տպիչի EPSON L805 կամ համարժեքը	10						
		50.	Վերանորոգում վնասված մասերի փոխարինում ներառյալ մասերը EPSON L805 կամ համարժեքը	10						

*ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:
**Պատվիրատուի պահանջի դեպքում 3 օրյա ժամկետում մատուցել պահանջվող ծառայությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
ՀՎՀՀ 900011175016
ՀՎՀՀ 02204739
Վարչության պետ՝
Ռ.Հովհաննիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Մատակարար.ԱՄՎ>> ՍՊԸ
ք.Երևան, Լ.Լիսինյան 8
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470101224450010
ՀՎՀՀ 00454158
տնօրեն՝ Վ.Թումասյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված
N 2
«27» փետրվարի 2018 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿՎ- ԳՀՇՁԲ -18/5-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների ինքնանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
1	50311120-1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	180.010	774.000	1.365.200	1.800.000	1.800.000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
Քաղաք Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
Վարչության պետ՝
Ռ. Հովհաննիսյան

/ստորագրություն

ԿԱՏԱՐՈՂ
<<Մատակարար.ԱՄՎ>> ՍՊԸ
ք.Երևան, Լ.Լիսինյան 8
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470101224450010
ՀՎՀՀ 00454158
տնօրեն՝ Վ.Թումասյան

/ստորագրություն/
Կ.Տ